Սերս

Վարչական ղեկավար՝ Բաբկեն Մուրադյան

Հեռ. +374 77573978

Բնակչության թիվը՝ 214

Սերս գյուղը ՀՀ Վայոց ձորի մարզի բարձր լեռնային և սահմանմերձ բնակավայրերից է: Սերսն ունի հին ու վաղեմի պատմություն: Հիմնադրման տարեթիվն անհայտ է: Հայտնի է , որ գյուղը պատկանելիս է եղել պատմական Հայաստանի Սյունիք նահանգին: Պահպանվում է գյուղի եկեղեցին, որի հիմնադրման տարեթիվը նույնպես անհայտ է: Սակայն հայտնի է, որ եկեղեցին վերանորոգվել է 1525 թվականին: Գյուղի բնակիչները 1604 թվականին գաղթվել են Շահ Աբասի կողմից: Գյուղը վերաբնակեցվել է 1828 թվականին, պապերը Պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Սաֆրա գյուղից գաղթած հայ ընտանիքներով:

Սերսը, լինելով սահմանամերձ գյուղ, 1988-1994 թվականներին նորից հայտնվել է պատերազմական իրավիճակում՝, սակայն իր բնակիչների վճռականության շնորհիվ դարձել է անխոցելի մի ամրոց: Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքն ունի դպրոց, բուժկետ և կենցաղսպասարկման այլ կառույցներ: